№ 64 Մարտի 16 (28) 1880 Մարտի 16 (28) № 64

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի կէս տարվանը 6 բուբլ
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Ռացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարց ենք առաջարկում.—Ներքին տեսութիւն։ Նամակ Մօսկվայից։ Նամակ Լոզոյից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր—Արտաքին տեսութիւն։ Սովը Հայաստանում։ Ամերիկա—«Մշակիս» հեռագիրներ։—Հայտարարութիւններ։—Ֆելիետօն։

ՀԱՐՑ ԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Մեզ յայտնի է որ թիւրքաց Հայաստանի սովատանջներին օգնելու համար հիմնված է Կ. Պոլսի մէջ սովատանջներին խնամող կենտրոնական մանաժողով։

Նոյնպէս հիմնված է մի մասնաժողով Վանի մէջ։ Մենք աշխատեցինք և պէտք է աշխատենք թէ նամակներով և թէ հեռագրով յարաբերութիւն պահպանել Կ. Պոլսի կենտրոնական մանաժողովի հետ։ «Մշակի» էգուցվայ համարում կը տպենք Կ. Պոլսի մանաժողովի նամակից բաղուածը, որտեղ բաւական մանրամասն տեղեկութիւններ կան յիշեալ մասնաժողովի գործունէութեան մասին։ Միայն մի քանի տեղեկութիւններ, օրինակ թէ ինչքան փողեր են ուղարկվում այս կամ այն նահանգ կամ գաւառ,—այդ տեղեկութիւնները թէ մասնաժողովը և թէ մենք անխոհեմութիւն ենք համարում առ այժմ յայտնելու տպագրութեան միջոցով։

Իսկ ինչ կը վերաբերի Վանի մասնաժողովի գործունէութեան, դրա հետ մենք չը կարողացանք դեռ ևս բաւականաչափ ծանօթանալու։

Տեղեկութիւններից երևում է, որ սովը պատել է գրեթէ ամբողջ Հայաստանը և Փոքր-Ասիան, ինչպէս այդ արդէն գիտէ մեր ընթերցողը։ Մեզ հասկանալի չէ, թէ ի՞նչ միջոցով մասնաժողովը կարողանում է օգնութիւն հասցնել սովեալներին այնպիսի մեծ տարածութիւնների վրա, ինչպէս Վանից մինչև Դիարբէքիր, կամ Կ. Պոլսից մինչև Ռայազէտ և այլն, առանց բաժինները ունենալու այլ և այլ քաղաքներում և մինչև անգամ գիւղերում։

Օրինակ Վանի մէջ մասնաժողով կայ. բայց սովը տարածված է և Վասպուրականի ուրիշ քաղաքներում և գիւղերում։ Այժմ ինքն իրան հարց է առաջարկվում։ միթէ սովածները պէտք է հեռաւոր տեղերից Վան դիմեն օգնութիւն ստանալու համար, և միթէ աւելի յարմար չէր լինի, եթէ մասնաժողովը հիմնէր իր բաժինները գաւառի գլխաւոր կէտերում՝ մի քանի բաղաքներում և գիւղերում։

Ռացի սորանից մենք առհասարակ կուզենայինք հարց առաջարկել թէ Կ. Պոլսի և թէ Վանի մասնաժողովներին. արդեօք մասնաժողովները գլխաւորապէս քաղաքների վրա են դարձնում իրանց ուշադրութիւնը, թէ հասարապէս հոգում են քաղաքների և գիւղերի սովատանջ հայ ազգաբնակութեան մասին։

Նոյնպէս հետաքրքիր կը լինէր իմանալ արդեօք մասնաժողովները իրանց համար նպատակ են դրել միմիայն հայ սովատանջ ազգաբնակութեանը օգնելու, թէ իրանց կարողութեան չափ չանում են հասարապէս օգնելու Հայաստանի ամեն սովատանջներին, առանց խտրութիւն դնելու ազգութեան և դաւանութեան մէջ։

Այդ բոլորի մասին մենք կաշխատենք այս օրերս տեղեկանալու թէ նամակներ գրելով և թէ հեռագրական ճանապարհով և բաւական տեղեկութիւններ ստանալուց յետոյ կը հաղորդենք նրանց մեր ընթերցողներին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Շատ ժամանակ չէ, որ մեր լրագրի միջոցով թանկագին թղթակցի պ. Մէլիքզադէն մի չորք յօդուածներ՝ գլխաւորապէս հայ երիտասարդութեան և մասնաւորապէս հայ ուսանողութեան վերաբերմամբ։ Այժմ բարեհաճէք ընդունել և այս երկու տողը Մօսկվայի հայ ուսանողներից ոչ իրրև պատասխան պ. Մէլիքզադէին, այլ իբրև բոլոր արդարացի զայրացման—մի դատ, որ կը բանեցնեն նուիրատուների ցուցակները եթէ ամեն նուիրատու անպատճառ կը կամենայ այդպէս լիքված լինել լրագրի մէջ։ «Մատենագիր Կիրակոս Եպիսկոպոս Մարտիրոսեանց, Նախիջևանցի, վաճառական՝ 5 կոպէկ։»

Ափսոս որ մեր նուիրատուները այդպէս չեն գրում.... աւելի էլ շատ տեղ կը բռնէր՝ «Ցովհաննէս Մակարեան Պետրոսեանց, ատրեանցի, քսան և հինգ տարեկան, անուսնացած, արուեստաւոր, հայ-լուսաւորական, չորս երեխաների տէր, գատարանին ենթարկված չէ եղել՝ 1 բուբլի։

Ինչ և իցէ, ինձ թող տրվեցնա վերջապէս, չը նայելով զանազան արգելքներին, կրկին զետեղել «Մշակիս» մէջ իմ ֆելիետօնս։

* * *

Ո՞րքան տխուր ժամանակներում ենք ապրում, բարեկամներ։ Ամեն կողմից լսվում են անմխիթար լուրեր՝ սով, թանգութիւն, առուտուրի անկումն, հրդեհներ, զանազան հիւանդութիւններ, մանկութիւններ,—և այդ բոլորի հետ միասին անհաստատութիւն, թշնամութիւն, անմիաբանութիւն, ինտրիգաներ.... Ա՞րժէ մի՞թէ ապրել....

Եւ նշանաւորն այն է, որ այս տարի չարունակ պատահում են անլսելի, անլուսելի, անհաղորդ բաներ...

Ամենաարդուստ, ամենաբերրի երկիրներում սով է ընկնում, տաք երկիրներում սարսափելի ցուրտ է լինում, նչենների ծաղկելու ժամանակ ձիւն է գալիս, Լիսմարկ և Բիսմարկիդ հրամարական են տալիս, Թիֆլիսի հայոց ներկայացուցիչները մրցում են առաջ ներկայացուցիչների հետ, Ազամեանը բարձրանում է մինչև երկինքը, ոչ թէ միայն որպէս դերասան, բայց և որպէս բանաստեղծ, փորձելու համար գոնասպէով տալում է նրա ստանաւորները, անուանելով նրան հայոց թատրոնի զարդ, յետոյ յանկարծ Ազամեանը թողնում է կոմիտէի բեմը, «փորձիչ խմբագիր և կոմիտէի անդամ պ. Ցոմ հանիսեանի նրան անարգան է համարում խաղալ Ամարյան թատրոնի բեմի վրա և պ. Ազամեան տրված է անցնել Աբգարեանց թատրոնը, Թիֆլիսի հայ օրիորդներն ու տիկինները, որոնք առաջ միշտ անտարբեր էին դէպի հայութիւնը, սկսում են կենդերտներ տալ և փողեր ժողովել յօգուտ Վասպուրականի հայ սովատանջների....

Վերջապէս որտեղ որ նայես, ամեն տեղ հակասութիւններ ես տեսնում,... Այս տարի հակասութիւնների տարին է։

* * *

Չեմ կարող չասել մի քանի խօսք մեր տեղական մամուլի մասին։

Մեր մամուլի վրա խօսելով չեմ կարող չը յիշել նրա մէջ յայտնված մի քանի կուրիոզների մասին։

«փորձիչ» նախագիրքին համարում պ. Մանգիսեան, ex-մանկավարժ և այժմեան ուժիմիստ հայ թատրոնական խմբի, մի երեսի մանկավարժական յօդուած է գրել։

Խորհուրդ եմ տալիս պ. Մանգիսեանին նախ բառերի նշանակութիւնը հասկանալ, յետոյ յանդգնել գիտական յօդուածներ գրելու։

Ռուսերէն երկու խօսք կայ, որոնք միմանց նման են՝ идіотизмъ և идіотство. Մեր գիտնական մանկավարժը լսելով որ ասում են идіотизмъ языка, որ եւրոպական լեզուներով նշանակում է լեզուի բարբառային առանձնութիւններ (idiome բարբառ, զաւառական լեզու բառից), կարծում է որ դա խենդ բառից է ծագում և թարգմանում է գլուխի խենդութիւններ....»

Զարմանում եմ որ «փորձը» առանց իրան նեղութիւն տալու օրինաւոր կերպով քննելու յօդուածը, ամեն տեսակ յօդուածներ զետեղում է իր էջերի մէջ...

Խորհուրդ կը տայի, ուրեմն, «փորձիչ» խմբագրին փոխել իր ամսագրի անունը. փոխանակ «փորձ» չասելու կը լինէր «պատեհան իր ամսագիրը «Զամբիւղ» անուանէր, որտեղ կարող է անխտիր հրատարակութիւն գտնել, ինչպէս զամբիւղի մէջ, ամեն տեսակ յօդուած....

* * *

Մեր հայոց կովկասեան լրագրութիւնը հարստացաւ մի նոր հրատարակութեամբ։ Դա մի զաւառական թերթ է «Պակաս» անունով, որ հրատարակվում է Երևանում, պ. Պապաջանեանի ձեռքով։ Խմբագրութիւնը խոստանում է իր ուշադրութիւնը գլխաւորապէս ժողովրդի անտեսական հարցերի վրա դարձնել, մասնաւոր Երևանեան նահանգի անտեսական ինդիրների վրա։ Շատ գովելի դիտաւորութիւն է.... Բայց թէ «Պակաս» ինչպէս է յարուցանում և արծարծում անտեսական ինդիրները,—կարող եք տեղեկանալ հետեւեալ կը տրից, որ բերում ենք այստեղ ամբողջութեամբ այդ չարաթթութիւնի 2-որդ համարից։

Երևանի նահանգի վրա խօսելով և յայտնելով որ Արարատեան նահանգը հայերի տիրոյթն է (ուզում էր ասել Հայաստանի տիրոյթ, եթէ ոչ ինչպէս մի նահանգ մարդու տիրոյթ կարող է լինել), յօդուածագիրը աւելացնում է. «Այդտեղ հարիւրն աւելի բազմամարդ են, տեղը գովված է իր բնական հարստութիւնով, երկիրը բուսուցանում է իր ժողովրդի պտղոյգի համար քսան տեսակից աւելի ընդեղէներ, այգիներում քսան տեսակից աւելի պտղեղէներ կան։ Այդքան բարութիւնների մէջ Երևանի նահանգի ժողովուրդը աղքատ է ու աղքատ։ Թէ ինչ է այս բանի պատճառը, դեռ որոշ յայտնված չէ։»

Նմանվելով «Պակասին» ևս այսպիսի յօդուած կը գրէիս։

«Պ. զօկտոր Պապաջանեանը իր պիտոյքի համար քսան տեսակից աւելի դեղջուկներ է ունեցել բերել, վարել է իր կեանքի մէջ քսան տեսակից աւելի պաշտօններ, բայց դարձեալ այնքան բարութիւնների մէջ խեղճով աղքատ է ու աղքատ։ Թէ ինչ է այս բանի պատճառը, դեռ որոշ յայտնված չէ։»

Պ. Պապաջանեանը ինքն էլ շատ հասկանում է, ու իր վրա մեծ խրթին չդնելու՝ նա իր լրագրի անունին համարում զարմանում է որ վարդան Եղիազարեան ընդունել է նրան իր տանը, այն ինչ ոչ ոք երբէք նրան ոչ մի տեղ չէ ընդունում։

Արդի բարեսիրտով և մեծ չնորհակալութեամբ պ. Վասակ Պապաջանեան դիշուցէ՝ որ Եղիազարեանի տանը ելև մուտ ունեցար.... «Զարմանքս մեծ էր, ասում է «Պակաս» խմբագիրը,